Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-2/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝ իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցում է դրանց շինարարության, վերանորոգման աշխատանքներին և իրականացնում է նշված աշխատանքների նկատմամբ վերահսկողություն:

Կազմակերպում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի, հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները:

Աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա)միջնակարգ կրթություն առանց աշխատանքային ստաժի

բ)պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

գ)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015թ. փետրվարի 27-ին, ժամը 13:00-ին, Մրգաստանի գյուղապետարանի շենքում:

Դիմող՝ Հ.Հ. քաղաքացիները աշխատակազմ կամ Հ.Հ. Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/

-Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ /պատճենը/

- Աշխատանքային գրքույկ /պատճենը առկայության դեպքում/

-Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

-Արական սեռի անձինք զինգրքույկ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր ու զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը, բնօրինակի հետ կամ համապատասխան տեղեկանք:

-Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ.-ի մարտի 3-ի N310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

-Մեկ լուսանկար 3x4 չափսի:

-Անձնագիր և անձնագրի պատճենը:

-Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից ժամը 9:30-ից 12:30:

-Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թ. փետրվարի 13-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հ.Հ. քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել՝ Հ.Հ. Արմավիրի մարզ Մրգաստանի գյուղապետարան /հեռ.0231-6-38-10/ կամ Հ.Հ. Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն:/հասցե Աբովյան փ. 71 հեռ. 0237-2-07-70/: